

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության
2022 թվականի տարեկան ծրագրի միջոցառումների կատարողական

Հ/Հ	Միջոցառում		Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ /ամիս, տարի/	Կատարողական
1	2	3	4	5	6	7
Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն						
1.	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի լրացման, դուրսգրման, պահպանման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված մրջոցառումների իրականացում	1) Իրագեկման աշխատանքներ	Համակարգային ազդեցությամբ հակավարակային (հակաբակտերիային, հակասնկային, հակամիկոբակտերիային, հակավիրուսային դեղերի, իմունային շիճուկների և իմունոգլոբուլինների, պատվաստանյութերի), միզուպրոստոլ պարունակող դեղերի, ինչպես նաև թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող, անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի մասով ապահովել «Դեղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սահմանված դեղատոմսերի պահանջներին համապատասխան բաց թողումը	ԴՇՎՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԽՈՐՀՀՐԴԱՏՎՈՒ ԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Ի ԲԱԺԻՆ	17.01.2022- 15.04.2022	Գրություններ են ուղարկվել Երևանի քաղաքապետին և մարզպետներին՝ դեղատոմսերի դուրսգրումը, դեղատոմսային ձևաթղթերի նկարագիրը, տպագրությունը, բաշխումը, պահպանումը և հաշվառումը ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1080-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ իրենց ենթակայությամբ գործող առողջապահական



						ընկերություններին առաջադրանք տալու անհրաժեշտության վերաբերյալ:
		2) Ըստ անհրաժեշտության ստուգումների իրականացում		ԴՇՎՎ ՏԿ ՀԱՄԱՊԱՏԱՍԽ ԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ	30.11.2022	53 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից դեղատոմսերի դուրս գրմանը ներկայացվող պահանջների պահպանումը պարզելու համար 2022 թվականի հունիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում հարուցվել են վարչական վարույթներ՝ հաշվի առնելով վերջիններիս կողմից ազգաբնակչության շրջանում սպասարկման և հնարավոր ազդեցությունը խնդրի կարգավորման վրա
2.	«Դեղերի մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների	Նախագծի մշակում Նախագծի ներքին շրջանառություն՝	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից պիտանիության ժամկետն	ԴՇՎՎ ՏԿ	10.02.2022 15.02.2022	Նախագիծը մշակվել է և դրվել է ներքին շրջանառության,



	վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ	առաջարկությունների ստացում	անցած դեղերի կիրառումը կանխելուն միտված վերահսկողության իրականացում	ՀԱՄԱՊԱՏԱՍԽ ԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ		առաջարկությունների հիման վրա լրամշակվել է և ներկայացվել Գրասենյակ
		Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	25.02.2022	
		Նախագիծը Գրասենյակ ներկայացում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	15.03.2022	
3.	«Դեղերի մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում	Պետության կողմից անվճար հիմունքներով տրամադրվող դեղերի իրացման նկատմամբ վերահսկողություն («ենթակա չէ իրացման» գրառմամբ դեղերի իրացումը դեղատնային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից կանխում)	ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ ՀԱՄԱՊԱՏԱՍԽ ԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ	15.04.2022	Նախագիծը մշակվել և ուղարկվել է Գրասենյակ
		Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում		ՏԿ ՀԱՄԱՊԱՏԱՍԽ ԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ	25.04.2022	
		Նախագծի անհրաժեշտության լրամշակում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	10.05.2022	
		Նախագիծը Գրասենյակ ներկայացում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	25.05.2022	
4.	ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում	ՀՀ դեղերի մեծածախ իրացման համար լիցենզիա ստացած կազմակերպությունների համար սահմանել պարտադիր պահանջ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող	ԴՇՎՎ	03.10.2022	Նախագիծը մշակվել և ներկայացվել է Գրասենյակ
		Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում		ՏԿ ՀԱՄԱՊԱՏԱՍԽ ԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ	10.10.2022	
		Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	17.10.2022	

		Նախագիծը Գրասենյակ ներկայացում	որն է կազմակերպության հետ կնքված պայմանագիր (Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված դեղերի մեծածախ իրացման վերահսկողության (ՏԳՏԴ ծածկագիր՝ G46.46.2) N 2.3 ստուգաթերթում առկա է դեղերի ոչնչացման վերաբերյալ կետ, սակայն առկա չէ դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ոչնչացման պայմանագիր կնքելու պարտադիր պահանջ):	ԴՇՎՎ ԻԱՓՎ	10.11.2022	
5.	ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված դեղերի մանրածախ առևտրի վերահսկողության (ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ G47.73) N 2.1 և դեղերի մեծածախ իրացման վերահսկողության (ՏԳՏԴ ծածկագիր՝ G46.46.2) N 2.3 ստուգաթերթերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում	ՀՀ -ում ռիսկի վրա հիմնված տարեկան ստուգումների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների շտկում և վերահսկողության լիարժեք իրականացում	ԴՇՎՎ	20.01.2022	Դեղերի շրջանառության վերահսկողության վարչության կողմից նախաձեռնվել է ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված դեղերի մանրածախ առևտրի վերահսկողության (ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ G47.73) N 2.1 և դեղերի մեծածախ իրացման վերահսկողության (ՏԳՏԴ ծածկագիր՝ G46.46.2) N 2.3 ստուգաթերթերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկների
		Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում		ՏԿ ՀԱՄԱՊԱՏԱՍԽ ԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ	31.01.2022	
		Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	10.02.2022	
		Նախագիծը Գրասենյակ ներկայացում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	01.03.2022	



						հավաքագրում, վերջիններիս հիման վրա մշակվել է ստուգաթերթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու որոշման նախագիծ և ներկայացվել է Գրասենյակ
6.	«Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացում իրականացնելու և ՀՀ կառավարության նոր որոշման նախագծի մշակում և ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից դեղերի հսկիչ գնումների անցկացման, դրանց ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված արտադրատեսակների տնօրինման կարգի ներդրում:	ԴՇՎՎ	01.07.2022	Առաջարկությունները ներկայացվել են Գրասենյակ
		Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում		ՏԿ ՀԱՄԱՊԱՏԱՄԽ ԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ	12.07.2022	
		Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում		ԴՇՎՎ ԻԱՓՎ	25.07.2022	
		Նախագիծը Գրասենյակ ներկայացում		ԻԱՓՎ	30.08.2022	

Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն

1.	Ընտանեկան բժշկության, ֆիզիոթերապևտիկ և վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման ոլորտների ստուգաթերթերի մշակում, նախագծերի ներկայացում Գրասենյակ	Ստուգաթերթերի նախագծերի մշակում դեռևս ստուգաթերթեր չունեցող տնտեսական գործունեության տեսակների համար	Թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում	ԲՕՍՎՎ	01.06.2022- 31.08.2022	Ընտանեկան բժշկության, ֆիզիոթերապևտիկ և վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման տեսակները ներառվել են ստուգաթերթեր՝ 3.10-ում, 3.12-ում և 3.9-ում, նախագծերը ներկայացվել են Գրասենյակ
----	---	--	---	-------	---------------------------	---



2.	Առկա ստուգաթերթերի վերանայում և փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ	Առկա ստուգաթերթերի մասնագիտական և իրավական առումով կատարելագործում	Թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում	ԲՕՍՎՎ	01.06.2022-31.08.2022	Խմբագրվել են 3.6, 3.13, 3.3 ստուգաթերթերը և մշակվել է նոր 3.17 ստուգաթերթը, նախագծերը ներկայացվել են Գրասենյակ
3.	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտում մասնագետների մասնագիտական փորձի իրազեկում, վերապատրաստում	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտի վերաբերյալ իրազեկման սեմինարների կազմակերպում	Մասնագիտական փորձի փոխանակում՝ տարածքային կենտրոնների աշխատակիցների ներգրավմամբ	ԲՕՍՎՎ	ըստ առաջնահերթության 01.01.2022-31.03.2022	Կազմակերպվել և իրականացվել են դասընթացներ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տնօրենների և աշխատողների համար
Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն						
1.	Վերահսկողության շրջանակներում կիրառվող անհատական և լոկալ իրավական ակտերը նորմատիվ բնույթ կրող իրավական ակտերով փոխարինելու վերաբերյալ առաջարկների ներկայացում լիազոր մարմնին	Իրավական ակտերի ցանկի ներկայացում ԻԱՓՎ Ներկայացված իրավական ակտերի ուսումնասիրություն, լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Օրենսդրական բացերի նվազեցում, ԱԱՏՄ-ի վերահսկողական գործառնությունների համար իրավական հիմքերի հստակեցում, գործունեության արդյունավետության բարձրացում	ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ	30.03.2022	Առաջարկություն է ներկայացվել լիազոր մարմնին
				ԻԱՓՎ	15.03.2022	
2.	«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին» օրենքում փոփոխությունների	Օրենսդրության ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում առաջարկությունների ներկայացում ԱԱՏՄ-ի ԻԱՓՎ	Բնակչության սանիտարահամաճարակային հսկողությունը ուժեղացնելու նպատակով սահմանային	ՀՄՀՎՎ ՏԿ	13.04.2022	Առաջարկությունները մշակվել են, սակայն լիազոր մարմնի հետ քննարկումների արդյունքում պարզվել է,



	կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ	Առաջարկությունների վերլուծություն և կարգավորումների նախագծի կազմում Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում Նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկում Նախագիծը Գրասենյակ ներկայացում	բժշկասանիտարական հսկիչ կետերի գործառույթների ամրագրում	ԻԱՓՎ	23.03.2022	որ մշակվում է նոր օրենքի նախագիծ, որում էլ հաշվի կառնվեն առաջարկությունները:
3.	ՀՀ կառավարության «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննությունների իրականացման կարգը սահմանելու մասին» որոշման նախագծի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում	Օրենսդրության կատարելագործում և օրենսդրական բացերի բացառում	ԱՕՎՎ ԻԱՓՎ	14.11.2022	Գրասենյակ է ներկայացվել աշխատանքային իրավունքի բնագավառում Տեսչական մարմնի գործունեության ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվություն, լիազոր մարմինների հետ համատեղ տեղի է ունեցել քննարկում՝ աշխատողների պարտադիր բժշկական զննության իրականացման կարգը սահմանող նորմատիվ իրավական

						ակտի մշակման վերաբերյալ
4.	«Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում	Օրենսդրության կատարելագործում և օրենսդրական բացերի վերացում հստակեցնելով Տեսչական մարմնի դերն ու նշանակությունը աշխատանքային հարաբերություններում: ԱԱՏՄ-ին օրենքով վերապահված գործառույթների տարանջատում և հստակեցում օրենսգրքով սահմանված դատական ատյանների վերապահված գործառույթներից: ԱԱՏՄ-ին աշխատանքային վեճերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության հստակեցում և տարաբնույթ մեկնաբանություններից խուսափում:	ԻԱՓՎ	30.01.2022	Նախագիծը մշակվել է և ուղարկվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
		Ներքին շրջանառություն			07.02.2022	
		Նախագծի ներակայացում Գրասենյակ			11.02.2022	
5.	Տեսուչների գիտելիքների ստուգում՝ թեստային առաջադրանքների մշակում և կիրառում	Խնդիրների վերահանում Առաջարկների ներկայացում	ԱԱՏՄ-ի կադրային որակի բարձրացում Որակյալ վերահսկողության իրականացում	ԱԱՏՄ ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ ԱՅԻՆ	10.02.2022	Մշակվել են առաջադրանքները, իրականացվել է բոլոր տեսուչների թեստավորում

				ՄՏՈՐԱԲԱԺՄԱՆՈ ԻՄՆԵՐ		
		Ներքին իրավական ակտերի մշակում		ԻԱՓՎ	21.02.2022	
		Գործընթացի սկիզբ			01.03.2022	
6.	Ռիսկի վրա հիմնված գործող ոլորտային ստուգաթերթերի լրամշակում	Խնդիրների վերահսում Առաջարկների ներկայացում	Ստուգաթերթերի որակի բարձրացում, ստուգումների պատշաճ իրականացում	ԱԱՏՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԱՅԻՆ ՄՏՈՐԱԲԱԺՄԱՆՈ ԻՄՆԵՐ	15.03.2022	Լրամշակվել են բժշկական օգնության սպասարկման վերահսկողության ոլորտի մի շարք ստուգաթերթեր
		Կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Գրասենյակ		ԻԱՓՎ	15.04.2022	
7.	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում Նախագիծը Գրասենյակ ներկայացում	1. Վարչական իրավախախտման գործի քննության արդյունքում կայացվող որոշման անհապաղ հայտարարման և և դրա փաստացի ստորագրման ամսաթվերի անհամապատասխանության պատճառով առկա իրավական վեճի բացառում: 2. Որոշումները որպես կանոն առձեռն ծանուցելու պահաջի վերացում	ԻԱՓՎ	01.03.2022 15.03.2022 23.03.2022 28.03.2022	Նախագիծը մշակվել և ներկայացվել է գրասենյակ
8.	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ	Նախագծի մշակում Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում	1.ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով դիմումով հարուցված վարչական վարույթի դեպքում հրամանում պահանջվող տեղեկատվության փոփոխություն:	ԻԱՓՎ ՈԱՎ	01.03.2022 15.03.2022	Նախագիծը մշակվել և ներկայացվել է գրասենյակ

	օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում Նախագիծը Գրասենյակ ներկայացում	2.Վարչական վարույթի կարճման հիմքերի ընդհանրացում, առկա հիմքերի լրամշակում: 3.ԱՍՏՄ-ում ստացվող անստորագիր դիմում-բողոքների վերադարձման հիմքերի ամրագրում:		23.03.2022 28.03.2022	
9.	«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում Նախագիծը Գրասենյակ ներկայացում	Վերստուգման առանձնահատկություններից ելնելով դրա առանձին ընթացակարգի սահմանում:	ԻԱՓՎ	01.02.2022 15.02.2022 23.02.2022 28.02.2022	Նախագիծը մշակվել և ներկայացվել է գրասենյակ
10.	«Դեղերի հետկանչի կառավարման ներքին ընթացակարգ»-ի մշակում և ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի ՈՀՀ-ում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ ՀՀ օրենսդրության խախտմամբ	ԴՇՎՎ ԻԱՓՎ	15.03.2022 30.03.2022 07.04.2022	Նախագիծը մշակվել և ներկայացվել է գրասենյակ

		Նախագիծը Գրասենյակ ներկայացում	ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանելու մասին թիվ 164-ն որոշման հավելվածի 9-րդ կետով սահմանված ներքին ընթացակարգի մշակում, որը պետք է ապահովի նաև տեսչական մարմնի հետ հետկանչ իրականացնողի կապի հաստատումը: Սահմանելվելու է նաև որ բոլոր այն դեպքերում երբ հետկանչի ենթակա դեղերը տնտեսավորողը համաձայնում է, կամ դիմում է վերաբառահանման, ապա դա համարվելու է թույլատրելի նորմ:		15.04.2022	
11.	ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում անհրաժեշտ հարկային գաղտնիք հանդիսացող տվյալների ստացման իրավունք վերապահելու մասին օրենսդրական փոփոխությունների մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի մշակում	ԱԱՏՄ-ին օրենքով վերապահված վերահսկողության ոլորտներում իրականացվող հսկողական աշխատանքները պատշաճ և ամբողջական իրականացման ապահովում: Վարչարարության ընթացքում ձեռքբերվող ապացույցների ամբողջականության ապահովում՝ ապահովելով վարչական վարույթների լրիվությունը և օբյեկտիվությունը:	ԻԱՓՎ	14.01.2022	Նախագիծը մշակվել և ներկայացվել է գրասենյակ
		Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում			19.01.2022	
		Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում			24.01.2022	
		Նախագիծը Գրասենյակ ներկայացում			31.01.2022	

Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն

1.	Ոլորտային նոր ստուգաթերթերի («ՀՀ-ում հելվինթոզների համաճարակաբանական հսկողություն», «Մարգադպրոցների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող պահանջներ») նախագծերի մշակում և ներկայացում Գրասենյակ	Ստուգաթերթերի նախագծերի մշակում դեռևս ստուգաթերթեր չունեցող տնտեսական գործունեության տեսակների համար	Տվյալ ոլորտում թեմատիկ ստուգումների իրականացման հնարավորություն	ՀՄՀՎՎ	ըստ առաջնահերթության 01.02.2022-30.08.2022	Մշակվել է ՀՀ-ում հելվինթոզների համաճարակաբանական հսկողության ստուգաթերթի նախագիծը: 2022 թվականի օգոստոս - սեպտեմբեր ամիսներին վերամշակվել և փորձարկվել են Ստուգաթերթ N 1.23-ը, Ստուգաթերթ N 1.24-ը և ս. թ. սեպտեմբերի 26-ի թիվ 01/17016-2022 գրությամբ վերը նշված ստուգաթերթերի նախագծերը ներկայացվել են տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
2.	Առկա ստուգաթերթերի վերանայում և փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ	Առկա ստուգաթերթերի մասնագիտական և իրավական առումով կատարելագործում	Թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում	ՀՄՀՎՎ	ըստ առաջնահերթության 01.02.2022-30.08.2022	Լրամշակվել է Մանրէազերծման գործունեության սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության N 1.17 ստուգաթերթը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 31-ի N 428-Ն որոշմամբ:



						<p>«Մանրէագերծման գործունեության սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության (ՏԳՏԴ ծածկագիր՝ Չ 86.10) N 1.17 ստուգաթերթի վերախմբագրված նախագիծը (հիմք՝ 2022թ-ի 18.01 թիվ 01/710-2022 գրություն), ինչպես նաև «Ջրի հավաքման, մշակման և բաշխման նկատմամբ սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության» ստուգաթերթի վերախմբագրված նախագիծը ներկայացվել է տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ (հիմք՝ թիվ 01/17016-2022 գրություն)</p>
--	--	--	--	--	--	--



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՎԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՎՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

**Գործունեության տարեկան ծրագիր
2022թ.**

3.	Ոլորտային նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների վերաբերյալ Գրասենյակ առաջարկությունների ներկայացում(օր՝ ԱՆ 2012թ. 14-Ն հրաման, ԱՆ 2008թ. 21-Ն, ԱՆ 2009թ. 03-Ն)	Իրավական ակտերի ուսումնասիրություն, լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Օրենսդրական բացերի նվազեցում, ԱԱՏՄ-ի վերահսկողական գործառույթների համար իրավական հիմքերի հստակեցում, գործունեության արդյունավետության բարձրացում, ինչպես նաև տեսչական մարմնի անվանման փոփոխություն:	ՀՄՀՎՎ ԻԱՓՎ	01.02.2022- 30.08.2022	Առաջարկություն է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 23-ի N 38-Ն հրամանով հաստատված՝ Վտանգավոր բեռների փոխադրման նկատմամբ սանիտարահիգիենիկ պահանջներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Պարբերաբար առաջարկություններ են ներկայացվել ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, առաջարկությունների զգալի մասը ընդունվել է
4.	Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր համակարգի ներդրում, մասնագետների վերապատրաստում	Ծրագրի շրջանակներում նյութատեխնիկական բազայի ապահովում և շահագործում, մարդկային ռեսուրսների ապահովում	Վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման պատճառների և պայմանների բացահայտում, դրանց կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանխարգելիչ	ՀՄՀՎՎ	1-ին կիսամյակի ընթացքում	Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր համակարգի ներդրման շրջանակներում 2022 թվականի ընթացքում



			միջոցառումների կազմակերպման նկատմամբ վերահսկողություն			վերապատրաստումներ չեն իրականացվել՝ հիմնադիրների կողմից չկազմակերպելու պատճառով: Վարչությունը տարվա ընթացքում մասնակցել է Ծրագրի ներդրմանն ուղղված բազմաթիվ քննարկումների:	
Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն							
1.	Ոլորտային, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության ստուգաթերթերի մշակումն ներկայացում Գրասենյակ	Ստուգաթերթերի նախագծերի մշակում դեռևս ստուգաթերթեր չունեցող տնտեսական գործունեության տեսակների համար 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված հանքարդյունաբերության բնագավառի վերահսկողության N 4.1 ստուգաթերթում փոփոխությունների կատարում՝ հիմք ընդունելով, 2021 թվականի ապրիլի 22-ի ՀՀ կառավարության N 634-Ն որոշմամբ ընդունված 2022 թվականի ապրիլի 23-ից առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի և նորմերի ուժը կորցրած լինելու հանգամանքը	Թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում		ԱՕՎՎ ԻԱՓՎ	30.03.2022	Մշակվել և Գրասենյակ է ներկայացվել Աշխատանքային իրավունքի վերահսկողության բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2022թ. մարտի 10-ի N299-Ն որոշմամբ



2.	ԱԱՏՄ-ի ԱՕՎՎ տեսուչների վերապատրաստումների կազմակերպում	Վերապատրաստման թեմաների ընտրություն «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» բարեգործական կազմակերպության հետ կնքված հուշագրով նախատեսված միջոցառումների և վերապատրաստումների անցկացում	Տեսուչների մասնագիտական կարողությունների մշտապես կատարելագործում Իրազեկվածության բարձրացում միջազգային ստանդարտներին համապատասխան	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	01.01.2022- 31.12.2022	ԱՄԿ-ի «Միաբին նպաստենք աշխատանքային իրավունքների իրացմանը» ծրագրի շրջանակներում 09.03.2022-12.03.2022թթ. անցկացվել է թվով 50 տեսուչների վերապատրաստում
3.	ԱԱՏՄ-ի ՏԿ-ի աշխատակիցների ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի նկատմամբ վերահսկողության իրականացման և կիրարկման ուղղությամբ դասընթացների կազմակերպում	Դասընթացների թեմաների և մոդուլների մշակում	ԱԱՏՄ-ի ՏԿ-ի աշխատողների մասնագիտական գիտելիքների բարձրացում Ստուգումների և վարչական վարույթների իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացում	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	01.01.2022- 01.04.2022	Տեսչական մարմնի կենտրոնական ապարատի և տարածքային կենտրոնների աշխատողների մասնակցությամբ անցկացվել է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 10-ի նիստում աշխատանքային իրավունքի վերահսկողության բնագավառում հաստատված ստուգաթերթի կիրակման վերաբերյալ հարցերի քննարկում

4.	Միջազգային կառույցների հետ համագործակցության ընդլայնում	ԱՊՀ անդամ երկրների և Մոնղոլիայի տարածաշրջանային դաշինքի (РАИТ СНГ и Монголии, RALI) տարեկան ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում, ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված օրենսդրության կատարելագործման, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների և աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման, ճանապարհային քարտեզի իրագործման աշխատանքներին մասնակցություն, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հետ համագործակցության իրականացում օրենսդրության կատարելագործման, ԱՄԿ ստանդարտների կիրառման ապահովման, աշխատանքի վերահսկողության տեսուչների վերապատրաստումների և փորձի փոխանակման բնագավառներում,	Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի պահպանման և ապահովման, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության կատարելագործում, Աշխատողների աշխատանքային իրավունքի պաշտպանության վիճակի բարելավում, Տեսչական մարմնի գործունեության ապահովում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան	ԱՕՎՎ	01.01.2022-31.12.2022	ԱՊՀ անդամ երկրների և Մոնղոլիայի տարածաշրջանային դաշինքի (РАИТ СНГ и Монголии, RALI) 2022թ. տարեկան ծրագրի շրջանակներում մշակվել են դաշինքի անդամ աշխատանքի տեսչությունների «Լավագույն տեսուչ» անվանակարգի իրականացման նախնական մեխանիզմներ: Դաշինքի տարբերանշան ստեղծելու վերաբերյալ առաջարկ է ներկայացվել դաշինքի 2022թ. նախագահող կողմին: Իրականացվել են Աշխատանքի տեսչության միջազգային ասոցիացիայի (МАИТ, IALI) լիիրավ անդամ դառնալուն ուղղված մի շարք համաձայնեցումներ
----	---	--	---	------	-----------------------	---



		Իրականացնել աշխատանքներ Աշխատանքի տեսչության միջազգային ասոցիացիայի (MAIT, IALI) լիիրավ անդամ դառնալու ուղղությամբ				
5.	Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հետ կնքված հուշագրով նախատեսված պրակտիկաների կազմակերպում և անցկացում «Հայաստանի տնտեսագիտական համալսարան» Հիմնադրամի հետ ուսանողների համար պրակտիկ դասընթացների կազմակերպման կազմակերպում	Պրակտիկ դասընթացների ծրագրերի մշակում և հաստատում Ուսանողների պրակտիկ դասընթացների գնահատում Հիմնադրամի հետ հուշագրի կնքում	Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկման արդյունավետության բարձրացում ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկման արդյունավետության բարձրացում	ԱՕՎՎ	01.01.2022-31.12.2022	Հայաստանի ազգային ազրարային համալսարանի թվով 14 ուսանողների հետ 21.02.2022-11.03.2022թթ-ին անցկացվել է արտադրական պրակտիկա: Հայաստանի ազգային ազրարային համալսարանի թվով 10 ուսանողների հետ 05.09.2022-07.10.2022թթ-ին նախադիպլոմային պրակտիկա:



ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Հ/Հ	Միջոցառում		Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ /ամիս, տարի/	Կատարողական
1	2	3	4	5	6	7
1.	Աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակի ներդրման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկների մշակում և ներկայացում Գրասենյակ	Օրենսդրական հիմքերի ուսումնասիրում Լիազոր մարմնի հետ քննարկումների իրականացում Փոփոխության նախագծի պատրաստում Արդյունքների վերլուծում	ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության բարձրացում	ԻԱՓՎ ԱՕՎՎ	01.01.2022- 31.12.2022	Աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակի ներդրման նպատակով Գրասենյակի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը շրջանառվել է: Նախագծի մշակմանը մասնակցել է Վարչությունը



2.	<p>Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործման և ամբողջականացման համար համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում ու ներկայացում Գրասենյակ</p>	<p>ՀՀ կառավարության 2019 թվականի N 650Լ որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրով նախատեսված անվտանգ աշխատանքային իրավունքների իրացման կարգավորման մեխանիզմների հստակեցում և բարելավում, ինչպես նաև համապատասխանեցում միջազգային պայմանագրով ամրագրված պահանջներին</p> <p>ՀՀ ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով</p>	<p>Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործում և ամբողջականացում</p>	<p>ԻԱՓՎ ԱՕՎՎ</p>	<p>01.01.2022- 31.12.2022</p>	<p>Լրամշակվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել «Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ:</p> <p>Մշակվել և Տեսչական մարմինների համակարգման գրասենյակ է ներկայացվել «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի</p>
----	---	---	---	----------------------	-----------------------------------	---



		<p>(CEPA) նախատեսված օրենսդրության մոտարկում</p>			<p>անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները հաստատելու մասին», «Օգտակար հանածոների ջարդման, տեսակավորման և հարստացման տեխնիկական անվտանգության կանոնները հաստատելու մասին», «Ստորերկրա եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ առաջարկություններ:</p>
--	--	--	--	--	---



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՎԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՎՋԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

3.	«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում Նախագծի լրամշակում ըստ անհրաժեշտության Նախագծի Գրասենյակ ներկայացում	ԱՄՏՄ-ի կողմից առանց աշխատանքային պայմանագրի կնքման կամ առանց անհատական իրավական ակտի ընդունման աշխատողին աշխատանքի ներգրավման դեպքերի բացահայտման ուղված ստուգումների ժամանակ ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի երկրորդ օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ներկայացնելու բացառություններ սահմանելը և ստուգումների արդյունավետության բարձրացումը	ԻԱՓՎ ԱՕՎՎ	01.02.2022- 01.03.2022	Նախագիծը մշակվել և ներկայացվել է գրասենյակ
4.		Նախագծի մշակում				



	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ	Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում	Գործատուի կողմից աշխատողների աշխատաժամանակի օրական կամ շաբաթական հաշվառում չիրականացնելու համար նախատեսված վարչական տույժի խստացում	ԻԱՓՎ ԱՕՎՎ	01.01.2022- 31.12.2022	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի շրջանակներում հարցը քննարկվել է, սակայն, քանի որ նախագծում աշխատաժամանակի հաշվառմանն առնչվող նոր կարգավորումներ են առաջարկվել, այդ իսկ պատճառով ՎԻՎ-ում նախատեսվող փոփոխությունները կառաջարկվեն նախագիծն ընդունելուց հետո:
		Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում				
		Նախագիծը Գրասենյակ ներկայացում				
		Դժբախտ դեպքերի վերաբերյալ ծառայողական քննություններ չիրականացնելու համար պատասխանատվության միջոցների սահմանում				

Հավելված 2



**Միջոցառումներ
Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման 2022 թվականի**

Հ/Հ	Միջոցառում	Արդյունք (խնդիրների լուծում)		Կատարող ստորաբաժանում/Ժամկետ		Կատարողական
		3	4	5	6	
1.	ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում գործող տնտեսավարողների շրջանում ԱԱՏՄ-ի գործառնությունների մասին իրազեկում	տեղեկատվական նյութերի, պաստառների, հուշաթերթերի պատրաստման և տարածման միջոցով	Տնտեսավարող ԱԱՏՄ-ի գործառնությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	01.02.2022-30.12.2022	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժաշխատողների համար իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանով հաստատված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէագերծմանը և մանրէագերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվների, ինչպես նաև նախադպրոցական



						ուսումնական հաստատությունների աշխատողների շրջանում ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857 հրամանով հաստատված «Նախադպրոցական կազմակերպությունների» N 2-III-1 սանիտարական կանոնների և նորմերի վերաբերյալ:
2.	www.employeeprotect.am www.8107.am	սոցիալական հոլովակների, տեղեկատվական նյութերի պատրաստման և տարածման միջոցով	Հանրության շրջանում կայքերի մասին իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	01.02.2022-30.12.2022	Տեսչական մարմին դիմած քաղաքացիներին, իրենց հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իրավական ակտերին, Տեսչական մարմնի կանոնադրությանն ու լիազորություններին ծանոթանալու, ինչպես նաև աշխատանքային իրավահարաբերություններին վերաբերվող դիմում-բողոք ունենալու դեպքում ուղղորդվել է օգտվել հիշյալ կայքերից: Կայքերի մասին տեղեկություն պարբերաբար հիշատակվել է ՁԼՄ-ների կողմից Տեսչական մարմնի գործառույթների մասին
	կայքերի առաջմղում					



ՀՀ ԱՌՈՂՋԱԳԱՀԱՎԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՎՈՒՄԻ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

						պատմող տեսանյութերում և հարցազրույցներում	
3.	Բնակչության շրջանում Տեսչական մարմնի գործառույթների մասին իրազեկում	անիմացիոն հոլովակների պատրաստման և տարածման միջոցով	Հանրության իրազեկվածության և Տեսչական մարմնի ճանաչելիության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	01.07.2022	Սահմանված ժամկետում անիմացիոն հոլովակներ չեն պատրաստվել	
4.	Հանրային իրազեկում՝ Համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով տարածվող աշխատանքի տեղավորման կեղծ առաջարկների չեզոքացման, անվտանգ միգրացիայի ապահովմանն ուղղված	Իրազեկման նյութերի պատրաստում և հրապարակում	Աշխատանքի պաշտպանության համաշխարհային օրվա	ԻԽՀՏԱԲ	28.04.2022	Ըստ ժամանակացույցի՝ իրազեկման նյութեր են հրապարակվել ԱԱՏՍ կայքէջում և ֆեյսբուքյան էջում	
			Աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվա		01.05.2022		
			Առանց ծխախոտի միջազգային օրվա		31.05.2022		
			Մանկական աշխատանքի դեմ պայքարի համաշխարհային օրվա		12.06.2022		
			Շինարարի օրվա		2022 թվականի օգոստոսի 2-րդ կիրակի		Նյութ չի հրապարակվել՝ ոչ աշխատանքային օր լինելու պատճառով
			Բուժաշխատողի օրվա		21.06.2022		Իրազեկման նյութը հրապարակվել է
			Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համաշխարհային օրվա		30.07.2022		Իրազեկման նյութը հրապարակվել է
			Դեղագետների միջազգային օրվա վերաբերյալ և այլ ոլորտային նշանակալի օրերի հետ կապված իրազեկման նյութեր		25.09.2022		Դեղագետների միջազգային օրվա կապակցությամբ նյութ չի հրապարակվել՝ ոչ աշխատանքային օր լինելու պատճառով:



						Ծխախոտի դեմ պայքարի ազգային օրվա առթիվ իրագեկման նյութ է տեղադրվել հոկտեմբերի 12-ին:
5.	ԱԱՏՄ-ի նախորդ տարվա աշխատանքի ամփոփում, ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալների, այդ թվում՝ մերժման հիմքերի ներկայացում	Կատարված աշխատանքների ամփոփ տվյալների հրապարակում պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, վերլուծական տվյալների տրամադրում ՁԼՄ-ներին	վերլուծական տվյալների տրամադրում ՁԼՄ-ներին	ԻԽՀՏԱԲ	28.02.2022	Հրապարակվել է պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում
6.	Դեղերի մանրածախ շրջանառության ոլորտի, Բուժ սպասարկման ոլորտի և 500-ից ավել աշխատակիցներ ունեցող հիմնարկների համար օրենսդրական փոփոխություն(ներ)	Դեղատնից կամ իր գործատուից բողոք ունեցող քաղաքացին կկարողանա անմիջապես դիմել Տեսչական մարմնին:	պարտադիր կլինի մուտքի դռան մոտ Տեսչական մարմնի Թեժ գծի և լոգոյի ինքնակաշունչի ամրագրում	ԻԽՀՏԱԲ ԻԱՓՎ	30.06.2022	Իրականացվել է մասամբ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ						
1.	Մարդկանց թրաֆիքինգի աշխատանքային շահագործման, ներառյալ երեխաների թրաֆիքինգի և շահագործման, հարկադիր աշխատանքի վտանգի նվազեցման ուղղություններով սեմինար-քննարկումների անցկացում	Շահագրգիռ մարմինների, կազմակերպությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցություն	ՀՀ-ում 2020-2022 թթ. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով և ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված	ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ	01.01.2022-31.12.2022	ՀԱԱՀ թվով 14 ուսանողների հետ 21.02.2022-11.03.2022թթ-ին արտադրական պրակտիկայի անցկացման ընթացքում թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր



			միջոցառումների իրականացում			աշխատանքի վերաբերյալ դասընթացների անցկացում
		Իրագրված աշխատանքներ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց, երիտասարդների հետ սեմինարների, դասընթացների միջոցով	Թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ իրագրվածության մակարդակի բարձրացում, այդ թվում մինչև 18 տարեկան անձանց			Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի հետ կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում, Տեսչական մարմնում արտադրական պրակտիկա անցնող համալսարանի 10 ուսանողների հետ անցկացվել են դասընթացներ թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ
2.	Աշխատող երեխաների ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման մասին իրագրված և աշխատող երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման կանխարգելման վերաբերյալ սեմինար-քննարկում	Սեմինարների անցկացում	ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի N 1622-Լ որոշմամբ հաստատված տարեկան ծրագրի շրջանակներում երեխաները կիրառվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրենց իրավունքների, արտոնությունների և սահմանափակումների մասին կանխարգելիչ երեխաների ներգրավումը աշխատանքի վատթարագույն ձևերում	ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ	01.01.2022-31.12.2022	Սեմինար քննարկում է իրականացվել Եվրոպական քոլեջի մանկավարժական կազմի և սովորողների համար: Սեմինարն անցկացվել է աշխատող երեխաների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների, աշխատատեղում անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման արգելման, ինչպես նաև հարկադիր աշխատանքի վերաբերյալ



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՎԱՆ և ԱՇԽԱՏԱՆԹԻ
Տեսչական մարմին
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

						օրենսդրությամբ սահմանված դրույթների հանրային իրազեկման նպատակով:
3.	2021 թվականի հուլիսից աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման ԱԱՏՄ-ի գործառույթների ընդլայնման վերաբերյալ իրազեկման միջոցառում	Հաղորդագրություն Ասուլիս	ԱԱՏՄ-ի նոր գործառույթների մասին հանրության և տնտեսավարողների իրազեկման բարձրացում	ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ	01.01.2022-31.12.2022	ՀՀ ԱԱՏՄ 2021 թվականի աշխատանքային օրենսդրության վերահսկողության բնագավառում իրականացված գործունեության վերաբերյալ հարցազրույց է տրամադրվել FACTOR.TV-ին:



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՎԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

4.	<p>ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների ապահովման նպատակով գործատուների (ներկայացուցիչների) և աշխատողների (ներկայացուցիչների) համար սեմինարների և խորհրդատվությունների իրականացում</p>	<p>Հաստատված պարբերա կանությամբ ԱԱՏՄ-ի կենտրոնական ապարատի և տարածքային կենտրոնների կողմից սեմինարների իրականացում</p>	<p>Աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների ապահովման ուղղությամբ գործատուների և աշխատողների իրազեկվածության մակարդակի բարելավում</p>	ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ	01.01.2022-31.12.2022	<p>«Աշխատանքային օրենսդրության դրույթների վերաբերյալ սեմինար-քննարկումներ են իրականացվել քոլեջների, դպրոցների, ստեղծագործական կենտրոնների ղեկավարների, ներկայացուցիչների համար, որը կազմակերպվել է «Կարիերայի Լաբ» կարիերայի և շարժունության կենտրոն ՀԿ-ի նախաձեռնությամբ:</p> <p>«Զինվորի տուն» ՀԿ-ի և Տեսչական մարմնի միջև կնքված հուշագրի շրջանակներում աշխատանքային օրենսդրության դրույթների կիրարկման վերաբերյալ 2022 թվականի փետրվարից դասընթացներ են իրականացվում պատերազմի մասնակիցների և նրանց ընտանիքի անդամների համար (շաբաթական 2 անգամ):</p> <p>Օքսիջեն և Սոլիդարիթի Մենթր հայաստանյան մասնաճյուղի հետ համագործակցության</p>
----	---	--	---	-------------	-----------------------	---



						շրջանակներում իրականացվել են սեմինար-քննարկումներ «Աշխատաշուկայում կանանց մասնակցության խթանում», «ՀՀ Աշխատանքային օրենսգիրք / սպասվող փոփոխություններ» և «ՀՀ Առողջապահական և տեսչական մարմինը, կառուցվածքն ու գործառույթները» թեմաներով:
--	--	--	--	--	--	---

Բժշկական օգնության սպասարկման վերահսկողության վերահսկողության վարչություն

1.	Դասընթաց-սեմինարների կազմակերպում բնակչության բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար	Դասընթացի նյութի մշակում և համաձայնեցում ԱԱՏՄ-ի ղեկավարի հետ, դասընթացի անցկացման կազմակերպում, դասընթացի անցկացում	Վերահսկողության ոլորտում արձանագրվող խախտումների նվազեցում ու կանխում	ԲՕՄՎՎ	ըստ առաջնահերթության 01.02.2022- 30.12.2022	Կազմակերպվել են յոթ սեմինար իրագեկում բժշկական օգնության և սպասարկման տարբեր ոլորտների մասնագետների համար՝ համապատասխանաբար 04.02.2022թ-ին, 22.02.2022թ-ին, 03.03.2022թ-ին, 05.04.2022թ-ին, 28.04.2022թ-ին, 23.06.2022թ-ին, 02.09.2022թ-ին
----	--	---	---	-------	---	--

